ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«07» հունիսի 2017 թվականի № 76-Ն

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 20-ի թիվ 29.6/[402784]-17 նիստի արձանագրության 5-րդ կետի հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Էդուարդ Շախկյան	աշխատանքային խմբի ղեկավար, աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Նարինե Սարգսյան	անձնակազմի կառավարման բաժնի պետ
Վահե Բարսեղյան	քարտուղարության տնտեսական բաժնի պետ

2. Աշխատանքային խմբին.

վերահսկողություն իրականացնել էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ենթակայության ընկերությունների և կազմակերպությունների տարածքների աղբահանության և

սանիտարական մաքրման վիճակի նկատմամբ և յուրաքանչյուր ամսի 1-ին էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին տեղեկատվություն ներկայացնել վիճակի և ընկերությունների և կազմակերպությունների կողմից այդ աշխատանքները պատշաճ մակարդակով իրականացնելու համար ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ